Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
նոյեմբերի 4-ի N 1400 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՑԱՆԿՈՒԹՅԱՄԲ ՏՎՅԱԼ ՏԱՐՎԱ ՉՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՕՐԵՐԸ ՀԱՋՈՐԴ ՏԱՐՎԱ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻՆ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում են ամենամյա արձակուրդից հետ կանչված՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության (այսուհետ՝ ոստիկանություն) ծառայողի՝ տվյալ տարվա չօգտագործված արձակուրդի օրերը նրա ցանկությամբ հաջորդ տարվա ամենամյա արձակուրդին գումարելու հետ կապված հարաբերությունները:

2. Ոստիկանության ծառայողը՝ բացառությամբ ոստիկանության պետի կամ ոստիկանության պետի տեղակալի, ամենամյա արձակուրդից հետ է կանչվում միայն բացառիկ դեպքերում՝ ծառայողական անհրաժեշտությունից ելնելով, ոստիկանության պետի համաձայնությամբ, արձակուրդի թույլտվություն տված պաշտոնատար անձի հրամանով, որում նշվում են հետկանչի օրը, ամիսը և չօգտագործված արձակուրդի օրերի թիվը: Ոստիկանության պետը կամ ոստիկանության պետի տեղակալն ամենամյա արձակուրդից հետ են կանչվում Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ:

3. Ամենամյա արձակուրդից հետ կանչված ոստիկանության ծառայողն արձակուրդի չօգտագործված օրերը հետկանչին հաջորդող տարվա արձակուրդի օրերին գումարելու խնդրանքով դիմում է հերթական արձակուրդից օգտվելու թույլտվություն ստանալիս՝ զեկուցագրին կցելով ամենամյա արձակուրդից հետ կանչվելու մասին հրամանի պատճենը:

4. Տվյալ տարվա արձակուրդի չօգտագործված օրերը տրամադրվում են հաջորդ աշխատանքային տարում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

10_1400